Ա. Զ. ՐԵԳՅԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը խոր հեղաշրջում առաջ բերեց ոչ միայն պետության սոցիալ-քաղաքական, տնտեսական, գաղափարական և կուլտուրական կյանքում, այլև ազգային հարաբերություններում։ Նա կործանեց «ժողովուրդների բանտը», ազգային պետականության համար ազգարարեց նոր դարաշրջանի սկիզբը՝ բազմազգ պետության մեջ, որտեղ կողք-կողքի ապրում և արդյունավետ աշխատում են ավելի քան 130 ազգեր և ժողովուրդներ, որտեղ յուրաքանչյուր ազգի, ժողովրդի ազգային պետականության ազատ զարգացումը դարձել է բոլորի անկաշկանդ զարգացման պայմանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության մեծագույն նվաճումներից մեկը սովետական ազգային պետականության և սովետական ֆեդերացիայի ստեղծումն է, որպես յուրաքանչյուր սովետական ազգի, հանրապետության ծաղկման, նրանց ավելի համագործակցման ու մերձեցման գործոնների։

Սովետական ազգային պետականությունը ամբողջ բազմազգ սովետական պետության հետ անցել է զարգացման կեսդարյա ուղի, որի ընթացքում ճշմարտացիորեն բնորոշվեցին նրա բնույթը, դերը, ավելի ակնհայտ դարձավ ազգային պետականության ձևերի կատարելագործումը։

Մինչև Հոկտեմբերը աշխարհում տիրապետող կապիտալիզմը մեկուսացնում էր ազգերին, հակադրում նրանց մեկը մյուսին, ամեն կերպ սահմանափակում էր միմյանց աջակցելու և զարգանալու հնարավորությունները։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ազգերի, ազգային պետությունների միջև ստեղծեց այնպիսի հարաբերություններ, որոնց պայմաններում նրանք զարգանալով, ծաղկելով՝ չեն մեկուսանում, այլ մերձենում են, համախմբվում են մեկ ընտանիքում՝ համակողմանի շփման, համագործակցության և փոխօգնության համար։

Սովետական ազգային պետականությունը մեր երկրի ազգերի պետականության և ժողովուրդների հավաքական անվանումն է, որն իր մեջ է ընդգրկում միութենական (մինչև ՍՍՀՄ-ի կազմվելը) և ինքնավար հանրապետությունները, ինքնավար մարզերը և ազգային օկրուգները։ Սովետական ազգային պետականության այդ ձևերի բազմազանությունը հնարավորություն է տալիս արտահայտել ՍՍՀՄ-ի ազգերի և ժողովուրդների տնտեսական, կուլտուրական, կենցաղային և պատմական զարգացման հատկանիշները, նպաստել ավելի էֆեկտիվորեն մասնակցելու սոցիալիզմի և կոմունիզմի կառուցմանը։

Սովետական ազգային պետականության ստեղծումն ու զարգացումը, ինչպես և սովետական ազգային-պետական հարաբերությունների զարգացումը խարսխված են Հոկտեմբերյան հեղափոխությամբ հռչակված ազգերի ազատության, իրավահավասարության և բարեկամության ընկրկբունքների, փոխադարձ կապակցված ու պրոգրեսիվ երկու յուրաքանչյուր ազգի, ժողովրդի, նրանց ազգային պետականության բազմակողմանիորեն զարգացման ու ծաղկման և նրանց ավելի մերձեցման տենդենցների վրա։

Մեր երկրի պայմաններում այդ օբյեկտիվ տենդենցների լրիվ իրականացման հիմնական ձևը եղել և մնում է ֆեդերացիան, որը առաջին անգամ դրսևորվեց 1918 թ. ՌՍՖՍՀ-ի ստեղծումով՝ Սովետական Ռուսաստանի մասշտաբով։ Այնուհետև, 1922 թ. կազմակերպվեց Անդրկովկասի լոկալ ֆեդերացիան և վերջապես ֆեդերացիա ամբողջ երկրի մասշտաբով՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։

Բազմազգ ֆեդերատիվ սովետական պետության և ազգային պետականության սոցիալիստական բնույթի և նպատակի ընդհանրությունը պայմանավորված է նրանց գործունեության ու ֆունկցիաների միասնությամբ։ Հիմքում ունենալով ազգային առանձնահատկությունը, ազգային պետականությունը ելնում է այն բանից, որ ազգային յուրատեսակությունը չի կարող լինել նրա ինքնանպատակը։ Ո՛չ միութենական և ինքնավար հանրապետությունները, ո՛չ էլ ինքնավար մարզերը և ազգային օկրուգները իրենց առջև խնդիր չեն դրել և չեն կատարել այնպիսի ֆունկցիաներ, որոնք հատուկ են սոսկ իրենց։

Սովետական ազգային, ինչպես և ընդհանրապես ամեն քաղաքական վերնաշենք, մինչև անդասակարգ հասարակության ստեղծումը «վերջին հաշվով ծառայում է արտադրության և, վերջին հաշվով որոշվում է տվյալ հասարակության արտադրական հարաբերություններով»[1]։

Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը ռուսական տիրապետության տակ գտնվող ազգերի և ժողովուրդների համար հատկանշական էին հասարակական զարգացման չափազանց ցածր մակարդակը և թույլ դասակարգային դիֆերենցիացան, տնտեսական հետամնացությունը, ընչազրկությունը և խավարամտությունը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, հռչակելով մինչ այդ չտեսնված սովետական պետական և հասարակական կառուցվածք, ամբողջ երկրի և նրանում բնակեցված բոլոր ազգերի ու ժողովուրդների տնտեսական և սոցիալ-կուլտուրական առաջադիմության համար բացեց նոր ուղի։ Սովետական պետության առավել բարդ և դժվարին խնդիրներից մեկը հանդիսացավ նախկինում շահագործվող ազգերի տնտեսական և կուլտուրական հետամնացության, ռուս ազգի նկատմամբ նրանց ունեցած փաստական անհավասարության լիկվիդացիան։ ՍՍՀՄ-ի ազգերին և ժողովուրդներին հաջողվեց իրականացնել այդ խնդիրը ամուր համագործակցության և փոխօգնության շնորհիվ և գլխավորապես հենվելով ռուս ազգի պրոլետարիատի օգնության վրա։ Կուսակցության X համագումարը տալով ազգերի անիրավահավասարության պատմական արմատների վերլուծությունը, անհրաժեշտ համարեց «ոչ ռուս-մեծապետական ժողովուրդների աշխատավոր մասսաներին հասնել առաջ անցած կենտրոնական Ռուսաստանին»։ Ելնելով դրանից, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մշակեցին և երկու տասնամյակում իրականացրին նախկինում շահագործված և հետամնաց ազգերին ու ժողովուրդներին ռուսական պրոլետարիատի կողմից ցույց տրվող օգնության հոյակապ ծրագիր՝ նրանց փաստական անիրավահավասարության վերացման համար։

Հասարակության զարգացման մեջ վճռական դերը պատկանում է արտադրությանը, էկոնոմիկային, որոնց վերելքի լծակներն են հանդիսանում գիտությունը, կուլտուրան։ «Սովետական իշխանության հերթական խնդիրները», «Կոոպերացիայի մասին» և այլ աշխատություններում Վ. Ի. Լենինը նշել է, որ կուլտուրական մակարդակի աճը բարձրացնում է մասսաների ակտիվությունը, արագացնում է սոցիալիզմի կառուցման պրոցեսը։ Դրանով է բացատրվում, որ սովետական իշխանությունը իր գոյության առաջին իսկ օրերից սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման հետ մեկտեղ հսկայական ուշադրություն է դարձրել սոցիալիստական կուլտուրայի զարգացմանը։ Սովետական պետության պայմաններում տնտեսական և կուլտուրական շինարարության հարցերն այնքան են շաղկապված, որ պետական իրավունքի հետազոտողները մինչև վերջին ժամանակներս տնտեսական-կազմակերպական և կուլտուր-դաստիարակչական աշխատանքը համարում էին որպես պետության մեկ ֆունկցիա։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը, հետևողականորեն իրագործելով ազգերի փաստական անհավասարության լիկվիդացման քաղաքականություն, նշել են հետամնաց ազգերի ոչ միայն տնտեսական, այլև կուլտուրական շինարարության զարգացման բարձր տեմպեր։ Նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի վերաբերյալ հարցերը սիստեմատիկաբար քննարկվել են միութենական և հանրապետությունների, ինքնավար մարզերի և ազգային օկրուգների սովետների համագումարներում, հանրապետությունների ԿԳԿ-ի նախագահություններում, ժողովրդական կոմիսարների սովետներում, մարզային և օկրուգային սովետների պլենումներում, նրանց գործկոմներում։ Ազգային պետականության օրգանների ամբողջ գործունեությունը համընկնում է ազգերի և ժողովուրդների տնտեսության ու կուլտուրայի զարգացման, առաջավոր ազգերի հետ նրանց փաստական հավասարման խնդիրներին։

Ներկա ժամանակում կուսակցության ազգային քաղաքականության իմաստը կայանում է նրանում, որպեսզի ապահովի ՍՍՀՄ-ի ազգերի և ժողովուրդների տնտեսության ու կուլտուրայի ծաղկումը, նրանց մերձեցումը։ Կուլտուրական շինարարության մեծ նշանակությունը, մասսաների կուլտուրական աճը չի սահմանափակվում միայն էկոնոմիկայի ոլորտով։ Այն մեծ է նաև հասարակական կյանքի այնպիսի կարևոր բնագավառում, ինչպես պետության գործերի և հասարակության կառավարումը։ Սկզբնական շրջանում, երբ գեռ մասսաների կուլտուրական մակարդակը ցածր էր, կգացվում էին կապիտալիզմի մնացուկները։ Բուրժուական, առանձնապես ցարական Ռուսաստանի բուրժուա-կալվածատիրական օրենսդրությունը ամեն տեսակ խոչընդոտներ էր հարուցում աշխատավորների մասնակցությանը պետության և հասարակության կառավարմանը։ Դրանք հատկապես ուժեղ էին ոչ ռուս ազգերի և ժողովուրդների նկատմամբ։ Սովե-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 85։

տական իշխանությունը սկզբից նեթ վերացրեց իրավական բնույթի այդ խոչընդոտները, բայց դեռևս երկար ժամանակ մնացին օբյեկտիվ, փաստական բնույթի խոչընդոտները։

Սովետական իշխանության օրենքները մեր երկրի բոլոր ազգերին և ժողովուրդներին հնարավորություն տվեցին մասնակցելու պետության կառավարմանը, լայնորեն օգտագործելու այդ իրավունքը։ Սակայն «...բացի օրենքից,— գրում է Վ. Ի. Լենինը,— կա նաև կուլտուրական մակարդակ, որը ոչ մի օրենքի չես ենթարկի։ Կուլտուրական այդ ցածր մակարդակը այն է, որ սովետները իրենց ծրագրով լինելով աշխատավորության միջոցով կառավարելու օրգաններ, իրականում հանդիսանում են կառավարման օրգաններ աշխատավորության համար՝ պրոլետարիատի առաջավոր խավի միջոցով, բայց ոչ աշխատավորական մասսաների միջոցով»[2]։ Հետևապես, կուլտուրական շինարարության նշանակությունը կայանում է նրանում, որ նրա պրոցեսում անընդհատ ավելանում է պետության կառավարմանը մասնակցող աշխատավորական խավը, ամրապնդվում են սովետական պետությունը և ազգային պետականությունը։

ՍՍՀՄ-ի ազգերի և ժողովուրդների տնտեսական և կուլտուրական զարգացման մեջ սովետական պետականության դերը մեծ է նրա բոլոր էտապներում, այն ավելի մեծացավ Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո։ Ներկա ժամանակում ազգային պետականության տնտեսական-կազմակերպական և կուլտուր-դաստիարակչական գործունեությունը ուղղված է ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թթ. հնգամյա պլանի հիմնական խնդիրների իրագործմանը՝ վճռական քայլեր կատարելու կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար։

Սովետական ազգային պետականության դոյությունը պայմանավորված է ոչ թե միայն տընտեսական-կուլտուրական շինարարության իրագործմամբ, ինչպես նշում են որոշ հետազոտողներ[3], այլև կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար պայքարը ընդգրկող հասարակական կյանքի բոլոր կողմերով։

Եվ իրոք, սահմանափակվում է, արդյոք, սովետական ազգային պետականության խնդիրը վերոհիշյալ միակ բնագավառով։ Դադարե՞լ է, արդյոք, նա կատարել կոմունիստական շինարարության քաղաքական խնդիրները, ինչպիսիք են սոցիալիստական ազգերի համագործակցությունն ու մերձեցումը։ Սովետական ազգային պետականությունը, ինչպես և սովետական պետությունը ամբողջությամբ վերցրած, ներկա պայմաններում, երբ պետության տնտեսական-կուլտուրական շինարարության խնդիրները և ֆունկցիաները այդ բնագավառում գրավում են առաջնակարգ տեղ, հանդիսանում է ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական կազմակերպություն։

Ներկա էտապում միութենական հանրապետությունների ազգային պետականության օրենսդրությանը բնորոշ է ավելի նշանակալի լիազորությունը. հանրապետությունների դերագույն սովետների կողմից ընդունված օրենքների և որոշումների (իսկ դրանք միայն վերջին տասը տարում հասնում են ավելի քան 5 հազարի) բովանդակությունը հանդիսանում է ոչ միայն ՍՍՀՄ-ի ազգերի ու ժողովուրդների տնտեսական և կուլտուրական հարցերը, այլ շատ ուրիշ, մասնավորապես քաղաքական բնագավառին վերաբերող հարցեր։ Իսկ ինչ է նշանակում օրենք։ Պատասխանելով այդ հարցին Վ. Ի. Լենինը գրել է. «Օրենքը դա քաղաքական միջոցառում է, քաղաքականություն է»[4]։

Կամ վերցնենք գործունեության բնագավառը՝ կապված ազգերի միջև եղած հարաբերությունների հետ։ Քաղաքականությունը միշտ եղել է դասակարգերի միջև եղած հարաբերությունների արտահայտություն, իսկ ազգերի առաջացումից հետո՝ ազգերի միջև հարաբերություն։ Եվ բանի դեռ դոյություն ունեն ազգեր և ազգային տարբերություններ, այդ հարաբերությունները իրականացնող հիմնարկներ, դրանց տվյալ պրոցեսը կրում է քաղաքական բնույթ։ Ինչպես Արմանդին գրած նամակում Վ. Ի. Լենինը նշել է «քաղաքականությունը հարաբերություն է ազգերի, դասակարգերի և այլն միջև»[5]։

Սովետական ազգային պետականությունը իրենից ներկայացնում է հասարակության պետական կազմակերպության ձև՝ լավագույն արտահայտելով ոչ միայն մեր երկրի ազգերի և ժողովուրդների տնտեսական և կուլտուրական զարգացման նպատակները, այլև կոչված է սոցիալիս-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 217։

3 Տե՛ս П. Г. Семенов, Программа КПСС о развитии советских национальных государственных отношений, Советское государство и право, 1961, № 12, стр. 93.

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 51։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 291—292։

տական դեմոկրատիայի անշեղ զարգացման հիման վրա աշխատավորներին ակտիվորեն ներգրավելու պետության կառավարման, բարելավելու պետական ապարատի գործունեությունը, ուժեղացնելու ժողովրդական վերահսկողությունը նրա նկատմամբ։

Ինչպես հայտնի է, պետության կառավարման մեջ մասսաների ներգրավումը, ինչպես և դրա իրագործման ձևերի ու մեթոդների կատարելագործումը եղել ու մնում է կարևորագույն քաղաքական խնդիր։ Վ. Ի. Լենինը, բնորոշելով կոմունիզմի կառուցման հիմնական պայմանները, նշել է, որ դրանցից մեկն էլ հանդիսանում է յուրաքանչյուր քաղաքացու կողմից պետական հանձնարարությունների առանց վարձատրության կատարումը, բոլոր աշխատավորներին, առանց բացառության, պետության կառավարման մեջ ներգրավումը։ Սակայն, գրել է նա, պետության գործերին քաղաքացիների մասնակցությունը դա քաղաքական միջոցառում է, քաղաքականություն է[6]։ Հայտնի է, որ սկզբնական շրջանում աշխատավորները բավարար չափով չէին մասնակցում պետության կառավարմանը, քանի որ մեր երկրի ազգերի և ժողովուրդների էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացումը դանդաղ էր ընթանում։ Անհրաժեշտ էր միայն սովետների գործունեության աշխուժացման հիման վրա հաղթահարել այդ հետամնացության պատճառները և էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացումը կրնթանար ավելի արագ տեմպերով։ Չլիներ սովետական ազգային պետականությունը, մեր երկրի ազգերի և ժողովուրդների աշխատավորությունը զրկված կլիներ պետության կառավարմանը լիարժեք կերպով հաղորդակից լինելուց։ Պետության կառավարմանը աշխատավորների լրիվ ներգրավումը, որը հանդիսանում է սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման գլխավոր ուղղությունը, միայն խնդիր չէ։ Այն, ինչպես նաև ազգերի ու ժողովուրդների սոցիալիստական հարաբերությունների զարգացումը, նրանց տնտեսական և կուլտուրական աճը պայմանավորված են սովետական ազգային պետականության հետագա գոյությամբ։

Սովետական հասարակության զարգացման բոլոր էտապներում սովետական ազգային պետականությունը իր խնդիրն է համարել ակտիվորեն աջակցել նորի հաղթանակին, կոմունիստական հասարակության կառուցմանը։ Դրա համար էլ նա հաջողությամբ իրագործում է մասսաների գաղափարական, բարոյական դաստիարակության, ներկա հասարակական հարաբերությունների կոմունիստականի վերաճման խնդիրները։ Այսպիսով, սովետական ազգային պետականության բազմակողմանի գործունեությունը համապատասխանում է կոմունիստական շինարարության խնդիրներին։ Այդ պատճառով էլ խոսք անկամ չի կարող լինել սովետական ազգային պետականության «ապաքաղաքականացման» մասին։

Սովետական հասարակությունը կոմունիզմի կառուցման ներկա և հետագա ժամանակաշրջանում չի կարող հրաժարվել պետության ծառայությունից ոչ օրենսդրական և ոչ էլ քաղաքական կյանքի այլ հարցերում, քանի դեռ առկա է պետության գոյության անհրաժեշտությունը։

Սովետական ազգային-պետական հարաբերությունների զարգացման ընթացքում Հոկտեմբերի արմատական նվաճումներից մեկն էլ հանդիսանում է ազգային հանրապետությունների ծաղկումն ու նրանց մերձեցումը։ Սովետական ազգային-պետականության և ֆեդերատիվ շինարարության հսկայական առավելությունը հանդիսանում է ոչ միայն նրանում, որ սովետական իշխանությունը բոլոր ազգություններին տվել է իրենց պետականությունը, այլ այն, որ նա օգտագործում է ֆեդերացիայի և ինքնավարության սովետական սկզբունքների հնարավորությունները, ապահովում սովետական ազգային պետականության բոլոր ձևերի համակողմանի զարգացումը։ Սովետական ազգային հանրապետությունների զարգացման ամբողջ ընթացքում սոցիալիստական ազգերը համոզվել են, որ իրենց ազգային վերափոխությունների տնտեսական, քաղաքական և կուլտուրական ծաղկման աղբյուրը իրենց անբաժանելի միասնությունն է սովետական ֆեդերատիվ միասնական պետության հետ։ Մեր երկրի ժողովուրդները ճիշտ են ըմբռնել և օգտագործել սովետական պետականությունը՝ ինչպես իրենց սեփական ազգային շահերի, այնպես էլ ամբողջությամբ վերցրած, պետության շահերի համար։

Լենինյան ազգային քաղաքականության իրականացման պրոցեսում սովետական պետությունը հաջողությամբ իրագործել է իսկական հեղափոխություն մեր երկրի ավելի քան 130 ազգերի և ժողովուրդների էկոնոմիկայում, կուլտուրայում և բոլոր կացութաձևերում։ Վերցնենք, օրինակ, հայկական միութենական հանրապետությունը։ Նա մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, կարելի է ասել, չուներ արդյունաբերություն, չհաշված փոքրաթիվ դինու, կոնյակի, պահածոների և այլ մանր ձեռնարկությունները։

---

[6] В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 33, стр. 340.

Սովետական իշխանության տարիներին հանրապետությունում ստեղծվել է ժամանակակից բազմաճյուղային արդյունաբերություն՝ գունավոր մետալուրգիական, քիմիական, մեքենաշինության, գործիքաշինության, էլեկտրոնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի և այլ ճյուղերով։ Քիմիական արդյունաբերության արտադրանքի և մոլիբդենի հումքի գծով, աշխատանքի ընդհանուր միութենական բաժանման մեջ Հայաստանին է պատկանում առաջատար տեղերից մեկը։ Ագարակի պղնձամոլիբդենային գործարանի գործարկումով Միությունում այդ հումքի գծով Հայաստանը գրավում է առաջին տեղերից մեկը։ Հայաստանի գործարանների դրոշմանիշով արտադրանք է արտահանվում աշխարհի 70 երկրներ։ Այն ցուցադրվել է Դամասկոսի, Լայպցիգի, Զագրեբի, Իզմիրի, Բրյուսելի միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների սովետական ցուցասրահներում։ Հայաստանի ներկայացուցիչները մասնակցել են միջազգային տեխնիկական կոնգրեսներին և կոնֆերանսներին։ Այսպես, 1957 թ. հոկտեմբերին Հայաստանի ներկայացուցիչը մասնակցեց Դյուսելդորֆի ավտոնոմիկայի գծով կազմակերպված միջազգային կոնգրեսի աշխատանքին, իսկ 1958 թ. սկզբին՝ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի ներկայացուցիչը մասնակցեց ուժային տրանսֆորմատորների կոնստրուկցիաների զարգացման և պատրաստման տեխնոլոգիայի կոորդինացման հարցերի գծով տնտեսական փոխօգնության խորհրդակցությանը։

Սովետական Հայաստանի միջազգային կապերի և հեղինակության աճման վկայություն կարող է ծառայել այն փաստը, որ սինթետիկ կաուչուկի արդյունաբերության հարցին նվիրված տնտեսական փոխօգնության խորհրդի մասնակից երկրների խորհրդակցությունը տեղի ունեցավ Երևանում (1959 թ. նոյեմբեր) որպես այդ արտադրանքի արտադրման խոշոր կենտրոններից մեկը։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում, ինչպես և մյուս ազգային հանրապետություններում, իրականացվել է իսկական կուլտուրական հեղափոխություն։ Այդ մասին են վկայում ակումբների, կուլտուրայի պալատների ու տների, գրադարանների, ընթերցարանների լայն ցանցը, գրքա-հրատարակչության մեծ չափերի ընդլայնումը, ազգային արվեստի ծաղկումը, դպրոցները, բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Ժամանակակից պետության ազգային կուլտուրայի մակարդակի ցուցանիշներից մեկն է հանդիսանում բնակչությանն ընկնող ուսանողների թիվը։ Հայաստանում տաս հազար բնակչությանն ընկնում է 177 ուսանող, այն ժամանակ, երբ նույն համեմատությամբ Իտալիայում 31-ն է, Ֆրանսիայում՝ 30-ը։

Տնտեսության և կուլտուրայի զարգացման գործում հսկայական հաջողությունների են հասել սովետական ինքնավար հանրապետությունները։ Այդ պրոցեսը հատկապես կարելի է նկատել Թաթարական ԱՍՍՀ օրինակով, որը վիթխարի թռիչք է կատարել տնտեսության և կուլտուրայի զարգացման ասպարեզում։

Սովետական Թաթարիայի պարծանքն է հանդիսանում արագ աճող նավթարդյունաբերությունը։ 1,5 միլիարդ տոննա նավթից, որը ընթացիկ հնգամյակում պետք է արտադրի ամբողջ երկիրը, մեկ երրորդ մասը բաժին է ընկնում Թաթարական ԱՍՍՀ-ին։ Հանրապետության նավթարդյունաբերությունը հասել է ամենաբարձր արտադրողականության և ամենացածր ինքնարժեքին։ Թաթարական ԱՍՍՀ-ն հսկայական հաջողություններ է ձեռք բերել նաև գիտության, լուսավորության, կուլտուրայի բնագավառներում։

Սովետական իշխանության տարիներին արմատական փոփոխություններ են կատարվել նաև ինքնավար մարզերում։ Հատկանշական է այդ ասպարեզում Խակասական Ինքնավար մարզի նվաճումը։ Խակասիան համարվում էր ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասը և քաղաքական աքսորավայրը։ Չնայած եղած հսկայական անտառային զանգվածներին, հարուստ հանքավայրերին, ցարիզմի ժամանակ փաստորեն նա չուներ արդյունաբերություն։ Չափազանց հետամնաց էր գյուղատնտեսությունը։ Բնակչության 98%-ը անգրագետ էր։ Սովետական իշխանության տարիներին բնական հարստությունների բազայի վրա այստեղ ստեղծվել են լեռնահանքային, քարածխային, անտառային, փայտամշակման, սննդի և այլ ճյուղերի արդյունաբերություն։ Եթե մինչև սովետական իշխանության հաստատվելը Խակասիայում չկար ոչ մի կուլտուր-լուսավորական և գիտական հիմնարկ, ապա այժմ այն ներկայացնում է համատարած գրագիտության, դպրոցների լայն ցանցի մարզ, որտեղ գործում են 3 ինստիտուտ, 5 տեխնիկում և շատ այլ կենցաղ-կուլտուրական հիմնարկներ։

Սովետական ազգային պետականության ծաղկման առանձնահատկությունը չի տանում դեպի ազգերի առանձնահատկությունների հավերժացման, մյուս ազգերից առանձնանալու, այլ տանում է դեպի օրինաչափորեն միմյանց մերձեցման, առանձնահատկությունների սակավացման, միասնության ամրապնդման և խորացման։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» նշել են ազգերի միջև օբյեկտիվ, պատմականորեն անհրաժեշտ համակողմանի կապերի առաջացումը և զարգացումը։ Նրանք գրել են. «Հին տեղական և ազգային կղզիացածության և սեփական արտադրության արդյունքների հաշվին գոյությունը պահպանելուն փոխարինելու է գալիս ազգերի փոխադարձ համակողմանի կապն ու համակողմանի կախումը։ Սա հավասարապես վերաբերում է ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր արտադրությանը»[7]։

Վ. Ի. Լենինը զարգացնելով և կոնկրետացնելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի տեսակետները այդ հարցում, դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը գիտականորեն հիմնավորել է ազգերի մերձեցման անխուսափելիությունը։ Նա նշել է, որ դրա համար «անհրաժեշտ է ունենալ ֆունդամենտ—սոցիալիստական արտադրություն, բայց այդ ֆունդամենտի վրա անհրաժեշտ է ունենալ նաև պետության դեմոկրատական կազմակերպություն»[8]։ Այդ, ինչպես ցույց տվեց սովետական սոցիալիստական պետությունը բազմազգ երկրի պայմաններում, անհնարին է առանց ազգային պետականության։

Սովետական ազգային պետականության գոյության արմատական պայմաններից և նրա զարգացման բոլոր էտապների խնդիրներից մեկը հանդիսանում է մեր երկրի ազգերի և ժողովուրդների, նրանց պետականության մերձեցումը։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ցարիզմի կապանքներից ազատագրված ազգերի և նրանց պետությունների մերձեցումը հանդիսացավ կոմունիստական կուսակցության և սովետական պետության գլխավոր խնդիրը։ Կուսակցության ծրագրի ազգային հարաբերություններին նվիրված բաժնում առաջ է քաշված բոլոր ազգերի աշխատավորության միասնության, մերձեցման անհրաժեշտությունը[9]։

Համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ ազգերի կամավոր մերձեցումը տեսությունից դարձավ կյանքի իրողություն։ Մեր երկրի ժողովուրդները հենց սովետական անկախ հանրապետության ձևավորվելուց անմիջապես հետո մտան եղբայրական հարաբերությունների մեջ, դրանում տեսնելով իրենց վերջնական հաղթանակի երաշխիքը։ 1917 թ. դեկտեմբերին սովետների համաուկրաինական առաջին համագումարը հռչակելով Սովետական Սոցիալիստական Ուկրաինայի ինքնուրույն պետություն, հանդիսավոր կերպով հայտարարեց բանվորա-գյուղացիական Ուկրաինայի և Սովետական Ռուսաստանի ամուր կապի և մերձեցման մասին։ Այդպես վարվեցին նաև նախկին ցարական ինքնակալության տերիտորիայի վրա առաջացած բոլոր ինքնուրույն սովետական հանրապետությունները։

Սոցիալիստական ազգերի ծաղկումը նպաստում է նրանց հետագա մերձեցման խնդիրների իրագործմանը։ Իր հերթին ազգերի մերձեցումը նպաստում է նրանց ավելի լիակատար ծաղկմանը։ «Ազգերի ծաղկումը, մերձեցման միջոցով և մերձեցումը ծաղկման միջոցով,— գրել է Լ. Ի. Բրեժնևը իր «Լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը» հոդվածում,— այդ է ազգային հարաբերությունների դիալեկտիկական զարգացման ուղին»[10]։

Արևմուտքում բարբաջում են այն մասին, որ սովետական ազգային հանրապետությունների մերձեցումը ուտոպիա է, իսկ սովետական ղեկավարների հայտարարությունն այդ մասին՝ «սովորական պրոպագանդա»։ Փորձը ցույց է տալիս, որ սովետական հանրապետությունների համակողմանի մերձեցումը այնպիսի օբյեկտիվ պայմանավորված պրոցես է, ինչպիսին հանդիսանում է նրանց տնտեսական ու կուլտուրական վերելքը և բազմակողմանի ծաղկումը։ Սոցիալիստական ազգերի տնտեսական ու կուլտուրական կապերի զարգացումը, նյութական արժեքների փոխանակումը սերտորեն կապված են նրանց մերձեցման հետ։ Չի կարելի, սակայն, ազգերի մերձեցումը վերագրել միայն այդ կապերին, նրանց զարգացմանը ու խորացմանը։ Ազգերի մերձեցումը այդ կապերի զարգացման արդյունք է։ Այն արտահայտվում է նաև նրանում, որ ՍՍՀՄ-ում սոցիալիստական շինարարության մեջ ազգերի ուժերի համախմբմամբ առաջացավ նոր պատմական ընդհանրություն՝ սովետական ժողովուրդ, ՍՍՀՄ-ի ազգերի և ժողովուրդների քաղաքա-

---

7 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Հայպետհրատ, 1960, էջ 38։

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 438։

9 Տե՛ս «КПСС в резолюциях съездов, конференций и пленумов ЦК», ч. 1, 1953, стр. 416.

10 «Известия», 30 декабря 1962 г.

կան, տնտեսական, գաղափարական ընդհանրություն։ Այդպես է եղել սոցիալիզմի շինարարության հաղթանակի ժամանակաշրջանում։

Կոմունիզմի կառուցման ներկա ժամանակաշրջանում սովետական հանրապետությունների ազգերը հասել են զարգացման այնպիսի աստիճանի, որ անհրաժեշտություն է դարձել ուժեղացնելու տնտեսական կապերը, համախմբելու նրանց ուժերը տնտեսական խոշոր խնդիրների կատարմանը, միջհանրապետական օբյեկտների միացյալ կառուցմանը, բնական հարստությունների օգտագործմանը։ Մերձբալթյան հանրապետությունները և Բելոռուսիան միացյալ ուժերով կառուցել են էլեկտրակայաններ, կամուրջներ, Ուկրաինական և Մոլդավական հանրապետությունները՝ Կուչուրգինսկայայի հիդրոէլեկտրակայանը, Ուզբեկական և Թուրքմենական հանրապետությունները՝ խոշորագույն ջրաբաշխիչ, անդրկովկասյան հանրապետությունները՝ Ղարադաղ—Աղստաֆա - Թբիլիսի—Երևան գազամուղը, որը անվանվում է «ժողովուրդների բարեկամություն» գազամուղ, Հայաստանն ու Վրաստանը՝ Երևան—Թբիլիսի ռադիոռելեային գիծ։

Յուրաքանչյուր ազգային հանրապետության էկոնոմիկայի կառուցմանը բազմակողմանի օգնություն են ցույց տալիս բոլոր եղբայրական հանրապետությունները։ Այդպիսի օգնության արդյունք էին Թուրքմենական ՍՍՀ-ում Կարակումյան ջրանցքի շինարարության ավարտումը, Թուրքմենիայում՝ նավթի և քիմիական արդյունաբերության ստեղծումը։ Մերձբալթիկայում՝ խոշորագույն լիտվական հիդրոէլեկտրակայանի շինարարությանը մասնակցեցին ոչ միայն Մերձբալթյան, այլև ամբողջ Միության հանրապետությունները։

Յոթնամյակի՝ Հայաստանի խոշորագույն կառույցների՝ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատի, Երևանի և Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանների, Երևանի և Կիրովականի ջերմաէլեկտրակայանների, Կիրովականի արհեստական թելերի և պրեցեզային հաստոցների գործարանների, Լուսավանի գործիքաշինական և ներտաշ հաստոցների գործարանների ու այլ օբյեկտների շինարարությունը իրականացվեց միութենական բոլոր հանրապետությունների աշխատավորների ամենաակտիվ մասնակցությամբ։ Այժմ հայ ժողովուրդը միութենական մյուս հանրապետությունների ժողովուրդների օգնությամբ հաջողությամբ լուծում է իր ազգային կարևոր խնդիրներից մեկը՝ Արփա—Սևան հսկայական ջրային թունելի ստեղծումով պահպանել Սևանի ջուրը։

Խղճուկ ու ծիծաղելի են թվում ՍՍՀՄ-ի ազգերի միջև տնտեսական հարաբերությունների և այլ կապերի բնույթի վերաբերյալ բերված փաստերի համեմատությամբ դաշնակների հայացքները։ Հայաստանի և միութենական եղբայրական հանրապետությունների միջև էլ ավելի խորացող տնտեսական կապերի պրոցեսը դաշնակցության գաղափարախոսները պատկերացնում են որպես միակողմանի, Հայաստանի էկոնոմիկան քայքայող ռուսական «իմպերիալիզմի և գաղութարարական» քաղաքականություն։ Դաշնակցության «Հայրենիք» թերթը 1966 թ. մարտի 17-ի համարի «Անկախությունը Հայաստանում» առաջնորդող հոդվածում, բնութագրելով այդ հարաբերություններն ու կապերը, գրել է. «Հայաստանում արտադրվող հումքն ու ֆաբրիկատները, վերջին հաշվով, ուղարկվում են Ռուսաստան, Սովետական Հայաստանը... հսկայական արհեստանոց է, որն աշխատում է Սովետական Միության համար»։

Հանրապետությունների միջև ընդլայնվում և կատարելագործվում է համագործակցությունը գիտության, կուլտուրայի, արվեստի բնագավառներում։ Հոգևոր հարստությունների ամենօրյա փոխանակումը իր արտացոլումն է գտնում համագործակցության տարբեր ձևերի մեջ։ Վերջին տարիներս առաջացել և լայնորեն կիրառվում են գրականության և արվեստի շաբաթներ։ 1964 թ. ապրիլին հայկական արվեստի վարպետները մեծ հաջողությամբ հանդես են եկել Մոսկվայում, 1965 թ. Էստոնիայում անցկացվեց հայ գրականության և արվեստի շաբաթ, էստոնական գրականության և արվեստի շաբաթ, ինչպես նաև ռուսական երաժշտության տասնօրյակը Հայաստանում։ Մեր երկրի սոցիալիստական ազգերի հոգևոր հարստությունների փոխանակումը և նրանց համատեղ ստեղծումը, միասնական աշխատանքը նպաստում են սովետական ազգերի և ազգային հանրապետությունների հետագա մերձեցմանը։

Նոր հնգամյակի մասին կուսակցության XXIII համագումարի դիրեկտիվներում մեծ ուշադրություն է նվիրված միութենական հանրապետությունների կապերի հետագա զարգացմանը և խորացմանը։ Այդ խնդիրների իրագործումը մեծ դեր կխաղա ՍՍՀՄ-ում ազգերի և ժողովուրդների էլ ավելի մերձեցման գործում։

Ազգային հանրապետությունների տնտեսության և կուլտուրայի հետագա զարգացման խնդիրների կատարման գործում մեծ դեր են խաղում տնտեսական, կուլտուրական շինարարության փորձի փոխանակումը, նրանց արդյունաբերական ձեռնարկությունների, սովխոզների, կոլտնտեսությունների, գիտական հիմնարկների, ուսումնական հաստատությունների միջև սոցիալիս-

տական մրցությունը։ Կ. Մարքսի «Ամեն մի ազգ կարող է և պետք է սովորել ուրիշից»[11] խոսքերը դարձել են յուրաքանչյուր ազգի վարքի նորմա, իսկ նրանց յուրաքանչյուրի նվաճումը դառնում է բոլորի սեփականությունը։

Կոմունիստական շինարարության խնդիրները պահանջում են հետագայում էլ ավելի զարգացնել, կատարելագործել հանրապետությունների միջև համակողմանի կապերը։ ՍՄԿԿ XXIII համագումարում Կենտկոմի հաշվետվության մեջ ընդգծված է, որ «կուսակցությունը, բոլոր կոմունիստները, անկախ իրենց ազգային պատկանելիությունից, կոչված են այսուհետև ևս անդուլ կերպով աշխատելու, որպեսզի այսուհետև էլ տեղի ունենա Սովետական Միության ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ըստ ամենայնի ամրապնդում, որպեսզի ավելի ու ավելի սերտ ու բազմազան դառնան նրանց տնտեսական, կուլտուրական ու հոգևոր կապերը»[12]։ Այդ բոլորի իրագործման համար հսկայական դեր ու նշանակություն ունի ազգային պետականությունը, որի համար անհրաժեշտ է հետագայում է՛լ ավելի կատարելագործել նրա բոլոր ձևերը։

Սովետական ազգային հանրապետություններում չկա հասարակական կյանքի ոչ մի բնագավառ, որտեղ չկատարվեն ազգերի պետական-իրավական և այլ մերձեցումներ։ Մեր երկրի ժողովուրդները խոր դիտակցությամբ ընկալում են այդ պրոցեսը և ակտիվորեն աջակցում կյանքում իրագործելու կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության միջոցառումները այդ բնագավառում։

Այդ պրոցեսի քննարկմանը նվիրված առանձին աշխատություններում նկատվում է շտապողականություն։ Ոմանք ազգերի հետագա մերձեցումը հասկանում են որպես ազգային առանձնահատկություններից հրաժարում, հատկապես ազգային-պետականության շինարարության հարցում։ Կուսակցությունը և սովետական պետությունը, նշելով մերձեցման կարևոր նշանակությունը, միևնույն ժամանակ մեծ ուշադրություն են հատկացնում ազգային առանձնահատկությունների հաշվառմանը, հանրապետությունների առանձնահատուկ շահերին, նրանց իրավունքների ընդլայնմանը։ Հանրապետությունների միասնությունը, մերձեցումը, որպես կարևոր պայման ազգային-պետականության շինարարության պրոցեսում, երբեք էլ չի նշանակում անտեսել, նսեմացնել այդ պրոցեսի մյուս կողմերը։ Հանրապետությունների առանձնահատկությունների, շահերի հաշվառումը հանդիսանում է կարևոր խնդիր և ազգային-պետականության շինարարության մեջ դա չպետք է անտեսել։ Միութենական հանրապետությունների շահերի և կարիքների հաշվառման նպատակով վերջին տարիներին ընդլայնվել է նրանց լիազորությունները ընդհանուր միութենական օրգաններում՝ Գերագույն սովետում, Մինիստրների սովետում, Գերագույն դատարանում։ ՍՄԿԿ Կենտկոմի սեպտեմբերյան (1965) պլենումի որոշումների հիման վրա դարձյալ ընդլայնվել են միութենական հանրապետությունների իրավունքները տնտեսական շինարարության և պլանավորման մի շարք հարցերում։

Մարդկության պատմությունը երբեք չի տեսել նախկինում շահագործված, պետականությունից զրկված ազգերի ու ժողովուրդների միմյանց մերձեցման, տնտեսության ու կուլտուրայի նման զարգացման արդյունքներ։ Սովետական ազգային պետականությունը հարթել է Հոկտեմբերյան հեղափոխությամբ լուսավորված իր զարգացման սեփական ուղին, որը տանում է դեպի ազգային պետականության է՛լ ավելի ամրապնդում։ Դրանում է կայանում սովետական ազգային պետականության միջազգային նշանակությունը։

---

[11] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 23, стр. 10.

[12] ՍՄԿԿ XXIII համագումարի նյութերը, «Հայաստան», հրատարակչություն, Երևան. 1967, էջ 141։